NATURE
CONSERVATION AGENCY
OF THE CZECH REPUBLIC

# ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ Է ԵՎ ԱՊԱԳԱՆ

1

# Չեխիայում բնության պահպանության ոլորտի վրա ԵՄ իրահանգների գործնական ազդեցությունը

**Պետր Օրել**
**սենատոր**
Չեխիայի Հանրապետության խորհրդարան

**Երևան**
**մարտի 31, 2022թ.**

Nature Conservation Agency of the Czech Republic | www.nature.cz

2

# Ինչո՞վ մեզ օգնեց «Նատուրա 2000»-ը

- Պահպանվող տարածքների ընդլայնում

«Նատուրա 2000» տարածքները սահմանվել են բացառապես գիտական տվյալների հիման վրա՝ առանց հաշվի առնելու սեփականության իրավունքները կամ ապագա ներդրումային ծրագրերը

- Սկիզբ դրվեց նոր տեսակների և միջավայրերի պաշտպանությանը

Ի սկզբանե պահպանվող տարածքներն ապահովում էին Չեխիայի համար արժեքավոր տեսակների ու միջավայրերի պաշտպանությունը, վերջերս հաշվի են առնվել ողջ Եվրոպայի առաջնահերթությունները

- Տեսակների պաշտպանության ուժեղացում

Նոր այնպիսի տարածքների պաշտպանության միջոցով, ինչպիսիք են օրինակ՝ անհետացման եզրին գտնվող չղջիկների տեսակներ պարունակող շենքերը և այլն:

NATURE IS OUR HERITAGE AND THE FUTURE | www.nature.cz 3

# Ինչո՞վ մեզ օգնեց «Նատուրա 2000»-ը

- Պաշտպանության պատճառների հստակեցում (թիրախային հատկանիշներ) և պահպանվող տարածքներում կառավարմանն առաջնահերթություն տալը

Նախկինում պաշտպանության պատճառներն ընդհանուր ձևով էին սահմանվում: Վերջերս, սակայն, կա կենտրոնացում որոշակի տեսակների և միջավայրերի վրա, ինչը հանգեցնում է թափանցիկության ավելի բարձր մակարդակի, օրենքների առավել արդյունավետ և գործնական կիրարկման, ինչպես նաև թիրախային և հստակ կառավարման:

NATURE IS OUR HERITAGE AND THE FUTURE | www.nature.cz 4

# Ինչո՞վ մեզ օգնեց «Նատուրա 2000»-ը

- Նոր մեխանիզմներ հողի սեփականատերերի հետ բանակցություններում

Պահպանությանն ուղղված համաձայնագրերի կամ ֆինանսական աջակցության, փոխհատուցումների հնարավորություն

- Մշտադիտարկմանն ուղղված ջանքերի մեծացում

Տեսակները կարելի է պաշտպանել միայն այն դեպքում, երբ գիտես՝ որտեղ են դրանք գտնվում և ինչ թվաքանակով են:



# Այլ կարևոր առավելություններ

- Փորձով կիսվելու հնարավորություն

Մեկ օրենսդրություն և միասնական նպատակ ողջ Եվրոպայում՝ ԵՄ այլ անդամ պետությունների հետ բնության պահպանության ոլորտում փորձով կիսվելու գործընթացի դյուրացում

- ԵՄ հրահանգների կիրարկման վերահսկողություն Եվրոպական հանձնաժողովի կողմից

Երաշխիք առ այն, որ «Նատուրա 2000» տարածքները որևէ երկրում քաղաքական փոփոխությունների հետևանքով չեն վտանգվի:

# Առանց ԵՄ իրահանգների…

…որոշ եզակի տարածքներ կվտանգվեին:

- Այն ներդրումային ծրագրերը, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ «Նատուրա 2000»-ի վրա, պետք է հատուկ գնահատման ենթարկվեն ՇՄԱԳ-ի (Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում) գործընթացի շրջանակներում
- Միայն առողջապահական կամ ռազմական պաշտպանությանն առնչվող շահերը կարող են գերակա լինել «Նատուրա 2000» տարածքների պաշտպանության հանդեպ. տնտեսական պատճառներն ընդունելի փաստարկ չեն նման ներդրումային ծրագիր սկսելու համար
- Որոշ դեպքերում փոխհատուցման միջոցառումները, որոնք իրականացվում են նախքան ծրագրի սկսվելը, կարող են թույլ տալ նման ծրագրի շարունակականությունը



# Նավարկություն Էլբա գետի վրա

- Գետերի ափերի եզակի էկոհամակարգ, թե՞ գետի վրա նավարկման պայմանների բարելավում:
- Այս տարածքն առաջարկվել է գիտական ուսումնասիրությունների արդյունքում, սակայն այն չի սահմանվել Չեխիայի կառավարության կողմից

→ Եվրոպական հանձնաժողովը բարձրացրեց տարածքի սահմանման և պաշտպանության հարցը (Եվրոպական դատարանում գործ հարուցելու վտանգ)

- Չեխիայի Հանրապետությունն ի վերջո գետի մի հատվածը սահմանեց որպես «Նատուրա 2000» տարածք
- Նավարկումը բարելավող՝ ջրաթողանցքների կառուցումը պետք է ենթարկվի հատուկ ՇՄԱԳ-ի
- Այն կարող է շարունակվել միայն այն դեպքում, երբ գործում են գետերի ափերի միջավայրերի պահպանության միջոցառումներ


Photo: Eva Volfová

# Անհետացման եզրին գտնվող թռչունների տարածքների պաշտպանություն

## Կովկասյան մարեհավ

- Կովկասյան մարեհավի համար «Նատուրա 2000» տարածք սահմանվեց Կրուշնե լեռներում
- Լեռան տարածքը նաև նպատակահարմար է հողմակայանների համար. շինարարությունը չի թույլատրվում ՇՄԱԳ բացասական եզրակացության պատճառով
- Առանց ԵՄ հրահանգների կովկասյան մարեհավի համար վերջին բարենպաստ միջավայրը կոչնչանար



NATURE IS OUR HERITAGE AND THE FUTURE | www.nature.cz 9

# Գետերի թափանցելիությունը ձկների միգրացիայի համար



Photo: Kamil Farský

- Գետերի վրա իրականացվող տարբեր շինաշխատանքների հետևանքով ջրահոսքերի (գետերի, առուների) մասնատումը (ֆրագմենտացիա) հիմնական խնդիրներից մեկն է
- Բնության պահպանության գործակալությունն ուսումնասիրեց երկրի բոլոր ջրահոսքերը→ հանրությանը հասանելի քարտեզներ և տվյալների շտեմարան → Ջրային հոսքերի թափանցելիության ազգային ռազմավարություն
- Շատ ջրահոսքերի սահմանում որպես «Նատուրա 2000» տարածքներ, 16 ձկնատեսակի՝ որպես տարածքների պաշտպանվող հատկանիշների պահպանություն

NATURE IS OUR HERITAGE AND THE FUTURE | www.nature.cz 10

# Շնորհակալություն ուշադրության համար

Պետր Օրել
orelp@senat.cz

NATURE CONSERVATION AGENCY OF THE CZECH REPUBLIC

ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ Է ԵՎ ԱՊԱԳԱՆ

www.biodiversity.am

